

## ՊՆՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Полярная звезда, № 14:—Սոցիալիզմի նպատակները յօդուածում ճուգան-Քարանդակին ցոյց է տալիս որ սոցիալիստները արդարեւ իրանց ամբողջ ուշադրութիւնը կենտրոնացնում են տնտեսական հարցերի վրայ, սակայն ոչ այն պատճառով որ նրանց անհասկանալի է մարդկային կեանքի վեճ շահերը, այլ հէնց այդ շահերի տեսակէտից: Սոցիալիստները նախ և առաջ կուտում են աղքատութեան դէմ: Իսկ աղքատութիւնը նշանակում է ոչ միայն ֆիզիկական տանջանքներ, այլ և հոգեկան ստորացում: Հոգեկան կուլտուրան անհրաժեշտօրէն պէտք է յինուի տնտեսականի վրայ: Գիտութիւնը և գեղարուեստը պահանջում են իրանց համար ներթափանցիկ միջոցներ, որ ստեղծուում են տնտեսութեամբ: Ուրշ պարսպ (Նոյստ), տնտեսական աշխատանքից ազատութիւն անհրաժեշտ պայման է քաղաքակրթութեան աշոգութիւնների համար: Աշխատանքի հասարակականացումը պէտք է մի քանի անգամ բարձրացնի աշխատանքի արդիւնատուութիւնը: Սոցիալիստական հասարակութեան մէջ մարդ շատ քիչ ժամանակ պէտք է կորցնի կեանքի անհրաժեշտ պէտքերին գոհացում տալու համար, քան ներկայումս: Հետեւաբար, մարդու պատ ժամանակը տնտեսական աշխատանքից շատ կ'ընդարձակուի և այդ պարպը կը լքցնուի աւելի բարձր տեսակի գործունէութեամբ, քան տնտեսականն է:

Ներկայ հասարակութեան մէջ մի միջոցառելը, պետական գործիչ, զօրավար աւելի յարգ և պատիւ են վայելում քան մեծ մի մտածող կամ գեղարուեստագէտ: Սոցիալիստական հասարակութեան մէջ կը կորչի մարդու կոպիտ, ֆիզիկական իշխանութիւնը մարդու վրայ, ուրիշն կ'անհետանայ և այն հմայքը, որ այժմ կապուած է միլիտանտներէ, պետական անձի և զօրավարի իշխանութեան հետ: Ուրիշի վրայ իշխելու տեղ մարդկային ոգին ճանաչելու է աւելի վեճ շարժաւիթներ մեզ շրջապատող խորհրդաւոր բնութիւնը և գեղեցկութիւնը բմբռնելու տենչը: Մշտամոզները և գեղարուեստագէտները

կը դառնան ապագայ մաղկութեան ներոսներ և առաջնորդներ:

Գիտութիւնը և գեղարուեստը մարդկային գոյութեան ամբողջ բնութեցում ունենոր գասակարգի մի նշին կոյտի սեփականութիւն էին: Մարդկանց ահազրն մեծամասնութիւնը բոլորովին մի կողմէր կանգնած հասարակութեան կրթուած մասի մտաւոր և էստէտիկական շահերից: Գեղարուեստական ճաշակի զարգացման կողմից ներկայ մարդը աւելի ստոր է կանգնած անտիկ և միջնադարեան մարդութիւնից, որովհետեւ կապիտալիզմի սառ ոգին արել է ինչ կարողացել է խեղդելու համար գեղեցկի հասկացողութիւնը: Առաջ, օրինակի համար, մարդկային բնակարանը շինուում էր բնակութեան համար և ոչ միող աշխատելու նպատակով, ուստի մարդիկ այդ շինութեան մէջ դնում էին իրանց ոգին, իրանց ճաշակը: Կապիտալիզմը այդ բոլորը սպանեց. շահը մոտացնել տուեց ճարտարապետական ճաշակը: Ժամանակակից քաղաքը, գիւղը այլ լանդշափուում են միակերպ և տափակ կապիտալիստական շարժումով: Այդ տափակ բուրժուական ճաշակի դէմ բողոք բարձրացրեց Անգլիայում Քէօսկին, Մորրիս:

Սոցիալիզմի դէմ միջմեղադրանքը այն է որ նա իբրև թէ ձգուում է ոչնչացնել անհատի ազատութիւնը: Յայտնի է որ Սպենսերը սոցիալիզմը անուանեց լապազալ սորկութիւն, կրկնելով այն ինչ ասում էին սոցիալիզմի թշնամիները: Սպենսերին և ուրիշներին սպազայի պետութիւնը նկարագրուում է հսկայական բանտի նման մի բան, որի մէջ մարդիկ գուցէ և կուշտ կը լինեն, սակայն փոխարէնը զրկուած կը լինեն ամենալու և ամենաթանկագին բարեբեց — ազատութիւնից: Սակայն այդ մեղադրանքն էլ հիմքից դուրկ է: Հասարակական աշխատանքի պարտադիր կազմակերպութիւնը որ պահանջում է սոցիալիզմը աւելի սուղ պէտք է ճնշի անհատականութիւնը քան ներկայ երեակայական բանտական ազատութիւնը: Ի՞նչ որ ներկայումս էլ տնտեսական աշխատանքը բանուորներին համար ստիզողա-

կան ընդթ ունի. և միթէ գործա-  
տէրը պահաւ է ճնշուած կապիտա-  
լական կազմի երկաթէ տնտեսական  
օրէնքներով. միամտութիւն է կար-  
ծել թէ կապիտալիստի ջէֆրից է  
Սոցիալաւաճ պարանքի զին նշանակելը  
և նա ամբողջապէս դերի չէ կապի-  
տալիստական տնտեսութեան բարդ  
պայմաններէ համազումարի ձեռքում,  
որ մանաւանդ զգալի է դառնում  
արդիւնազորական կրիզիսներէ ժա-  
մանակ: Երեւակայական է և մտաւոր  
աշխատանքի պատուութիւնը ներկայ  
կարգերում: Սոցիալիզմի ժամանակ  
ինարկէ չի լինի միայն ոչինչ չանե-  
լու ազատութիւնը, որովհետեւ ոչինչ  
չանել նշանակում է հարստահարել  
ուրիշի աշխատանքը:

Սոցիալիզմը բնաւ խելառ միտք  
չունի հասարակական կազմակերպու-  
թեան ենթարկել մարդկային աշխա-  
տանքի բոլոր տեսակները: Պէտք է  
միայն փոխուի տնտեսական աշխա-  
տանքի ներկայ կապիտալիստական  
ձևը: Այլ ձգտումներ մէջ մարդիկ  
լինելու են միանգամայն ազատ, այն  
տարբերութեամբ ներկայի համեմա-  
տած որ մարդիկ ճնշուած չեն լինե-  
լու տնտեսական հոգսերի և զրկանք-  
ների շնորհիւ. սոցիալիզմը նրանց  
ազատելու է վարույ ազգայն, ապա-  
դայ անապահովութեան մշտական  
երկիրդից, որ այժմ կապարի պէս  
ճնշում է մարդկութեան վրայ և այն-  
քան կորստաբեր ազդեցութիւն ա-  
նում ստեղծագործական աշխատանքի  
վրայ: Սոցիալիզմը գրաւիչ է դար-  
ձնելու և աշխատանքը, կրճատելով  
նրան և զինելով ստեղծագործական  
լուսազոյն պայմաններում:

Սոցիալիզմը ձգտում է ըստ կա-  
րելոյն շատ տնտեսական հոգսեր  
անհատ մարդուց փոխադրել ամբողջ  
հասարակութեան վրայ, և հէնց այդ  
բանի շնորհիւ մարդու անձնաւորու-  
թիւնը ազատուելու է բազմակողմա-  
նի դարձացման համար: Ժամանա-  
կակից սոցիալիզմը ոչ այլ լինչ է, ե-  
թէ ոչ կենսուրաբ, գուարթ և դէպի  
մարդիկը խոր սիրով և յայտով հա-  
մակուած հումանիզմ: Իհնց դրա մէջ  
է սոցիալիստական իդէալի անյազ-  
թելի ոյժը: Այն բոլորը ինչ որ ճշդ-  
մարիտ և արժէքաւոր է լինելովիզմը  
մէջ իւրացրել է սոցիալիզմը, որ ա-  
ւելի է աւելի դառնում է ոչ միայն  
հաւատքը պրոլետարիատի, որ իր  
վրայ է կրում մեր մտայլ և արիւնոտ  
ժամանակի բոլոր ծանրութիւնը, այլ  
և հաւատքը այն բոլորի, որանց մէջ  
կենդանի է հաւատը դէպի մարդու-

թեան լուսազոյն ապագան, երջան-  
կութիւնը, խաղաղութիւնը և ազա-  
տութիւնը:

Կեանք, քաղաքական, հասարա-  
կական և տնտեսական օրգանս—  
էլիտելով մարխիստական-ընկերա-  
վարական-նախկալարական օրգանս  
Եկեանքը խիստ ծանր դեր ու հա-  
զուազիւտ պարտականութիւն ունի  
կատարելու հարկական իրականու-  
թեան մէջ հայ բանուոր դասակարգի  
համար, ստուած է առաջին համարի  
առաջնորդողում: Շատ համակրելի  
նպատակ է դրել իր առջև նոր օր-  
գանք—հայ պրոլետարիատի դասա-  
կարգային գիտակցութիւնը դարձա-  
ցնել, նրա շահերը պաշտպանել: Սա-  
կայանքը կը ցանկանայիք որեկանե-  
քը հետու լինէր այն նեղ և սխալ  
տակտիկայից, որ իւրացրել են կոմ-  
կասի Եօրթողոքս մայրսխանները:  
Իհաւ-մատերկալիստական և գիտա-  
կան աշխարհայացքը չի կարող մար-  
սել այն քաղաքած գողմատիզմը, որ  
ով վարակուած է մեր սոցիալ-դե-  
մոկրատիայի մի մասը, որ չըմբռնեց  
այն պարզ ճշմարտութիւնը թէ ներ-  
կայ յեղափոխութեան նպատակը կա-  
րող էր լինել բուրժուական-դեմո-  
կրատիական կարգերի յաղթանակը.  
վրիցեցիօնիստական տեսակէտը չը-  
պէտք է մոռանալ... Պէտք է մի կողմ  
թողնել ամեն տեսակէտի աղան-  
դաւորութիւն ազատ լինի գանազան  
կատեխիզիսիցից և մօտ կանգնել  
կենքին, աւելի լայն հայեացք ու-  
նենալ մարդկային հասարակու-  
թիւնների էվոլյուցիայի վրայ: Մենք  
զեռ չունենք կազմակերպուած, գի-  
տակից պրոլետարիատ և մեր սոց-  
դեմ. իրանց առջև ունեն ստեղծագոր-  
ծական անազին աշխատանք, որի հա-  
մար ամենից քիչ է պահանջուած խըր-  
թին յօդուածներ, վերացական ֆոր-  
մուներ և նեղ կուսակցամուլանհամ-  
բերող ոգի դէպի նոյն նպատակին  
ձգտող ուղղութիւնները... Ի սրտէ  
ցանկանում ենք որ Եկեանքը իս-  
կապէս դառնայ մեր բանուորութեան  
խորհրդատու, ղեկավար, կազմակեր-  
պիչ, արտայայտիչ և դաստիարակող  
օրգան և լինի ինքնուրոյն ու ան-  
կախ մեր առանձնատուկ պայման-  
ները ըմբռնելու և այդ պայմաննե-  
րում գործելու համար: Աւելացնենք  
որ Եկեանքը իր տակտիկայով աւելի  
մօտ է մեծամասնականներին և  
րնարում է ազգային ինքնավար ը-  
կզուներ սոց. դեմ. կուսակցութեան  
կազմակերպութեան մէջ:

Եմբարդի՝ Լ. Մարգեան  
Հրատարակիչներ Ա. Գաւանհան  
Լ. Մարգեան: